

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑԻ ԳՐԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

Սույն հոդվածում փորձ է արվում նորովի քննարկել ու գնահատել արձակագիր Ակսել Բակունցի գրական հայացքների մի փունջը՝ ելնելով նրա «Ն.Գոգոլի «Տարաս Բուլբա», «Հանուն ժանրերի բազմազանության» հոդվածներից և Խորհրդային գրողների համամիութենական առաջին համագումարում արտասանած ճառից: Ընդգծվում է, որ տաղանդավոր գրողը նորարար է ոչ միայն գեղարվեստական արձակում, այլև գրականագիտության բնագավառում:

Բանալի բառեր՝ Ա.Բակունց, Սյունիք, արձակ, գրական հայացքներ, Ն.Գոգոլ, «Տարաս Բուլբա», թարգմանություն, գրական ժանրեր, բակունցյան ընդհանրացումներ:

Ասված է ժամանակին ու տեղին. «Թե ուզում ես ճանաչել գրողին, եղիր նրա հայրենիքում»: Ասել է, թե՛ ինչպիսին ծննդավայրն է, այնպիսին էլ ստեղծագործողն է: Այս ճշմարտությունը Հայոց աշխարհում առաջին հերթին առնչվում է Սյունիքին, որի վերաբերյալ մեծերն են բարձրաձայնել՝ «Սյունիքը Հայոց լեռնաշխարհի ողնաշարն է»: Իսկ ո՞ր իմաստունն է, որ լինելով Սյունիքում, չի հմայվել նրա լեռներով, ջրերով, նրա աստղածին, աստղալեզու, աստղացան գավակներով և կյանքի բոլոր հերկերի բարեբեր ծիրերում հուսավառ, լուսառաք և ամենից կարևորը՝ ինքնատիպ, ինքնավստահ, օջախապաշտ, ժողովրդապահ, արարող, իր «Ես»-ով աշխարհը զարդարող անհատականությամբ: Կարելի է այստեղ թվարկել սյունեցի շատ երևելիների անուններ, սակայն չեն հերիքի ոչ թուղթը, ոչ ժամանակը, ոչ էլ նույնիսկ գրիչ բռնող ձեռքի ուժը: Եվ քանի որ մեր խոսքը գեղարվեստական գրականության մասին է, ուստի կցանկանայինք սյունիքյան լեռների թթվածնի ներշնչումով արտաբերել *Ակսել Բակունց* անունը, և հպարտ ու վստահ դիմել երկրագնդի բոլոր հանճարներին ու ասել. այս մենք ենք ու մեր մենքի հանճարը խտացնող մեր դյուցազուններից մեկը՝ Ակսել Բակունց անունով:

Մեր նպատակից դուրս է Ա.Բակունցի գեղարվեստական արձակի որևէ շերտի գնահատումը: Մեզ հետաքրքրում է կարևորագույն մի հարց, որը վերաբերում է ուզածդ գրական մեծությանը՝ բացահայտելու և տեսնելու նրա պատկերավոր մտածողության սահմանները նաև գրականագիտության բնագավառում: Այս միտումն է, որ մեզ տարավ Մեծն Բակունցի գրական ժառանգության բազմաբովանդակ աշխարհը: Ու կրկին համոզվեցինք, որ նրա ստեղծագործական աստվածանվեր կարողությունը նույն ինքնատիպությամբ փայլում է նաև գրականության պատմության, գրական քննադատության ու գրականության տեսության բնագավառներում: Այդ ուղղությամբ քիչ չեն նրա թողած խոսուն էջերը, որոնց մասին իր խոսքն է ասել հայ բակունցագիտությունը՝ առանձնապես անհատի պաշտամունքի քննադատությունից հետո:

Սակայն Բակունցն այն մեծություններից է, որի հունձքը նոր առեղծվածներ է բացում ժամանակների առջև, նոր խորհուրդներով ներկայանում իրենց աշխարհ-ընկալմամբ կյանքին միանգամայն ուրիշ դիրքերից նայող սերունդներ:

րին: Հենց այս առումով էլ մենք կձգտենք փաստարկել անմահ գրողի «Ն.Գոգոլի «Տարաս Բուլբան», «Հանուն ժանրերի բազմազանության» հոդվածները և նրա ճառը խորհրդային գրողների համամիութենական առաջին համագումարում, որոնք վերաբերում են ոչ միայն հայ-ռուսական գրական կապերին, այլև համաշխարհային մշակույթին հուզող հիմնախնդիրներին՝ իրենց նշանակությամբ միշտ թարմ և ուսուցանող:

Վաղուց է հայտնի հանճարեղ գրող Ն.Գոգոլի ստեղծագործության տեղն ու դերը ոչ միայն ռուսական դասական, այլև մյուս ժողովուրդների գրականության զարգացման ու հարստացման մեջ: Տվյալ դեպքում մեզ հուզում է անմահ գեղագետի «Տարաս Բուլբա» երկի թարգմանությունն Ա.Բակունցի կողմից և այդ առիթով նրա գրած առաջաբանը:

Նշենք, որ դեռևս 19-րդ դարի 30-ական թվականներից սկսած՝ Գոգոլի ստեղծագործությունն անմիջապես ոչ միայն արժանացել է հայ հասարակայնության ուշադրությանը, այլև մեծապես նպաստել է մեր ազգային գրականության ճկավորմանը: Նրա մասին իրենց դրվատանքի խոսքն են ասել Ստեփան Նազարյանցը, Միքայել Նալբանդյանը, Սմբատ Շահազիզը, Գաբրիել Սունդուկյանը և այլ մեծություններ: Ռուս անմահ գրողի երկերի թարգմանությունները հայ իրականության մեջ հիմնականում սկսվել են 19-րդ դարի 80-ական թվականներից: Այդ շնորհակալ գործին մասնակցել են Շիրվանզադեն, Պռոշյանը, Աբեղյանը և ուրիշներ:

Մինչև 1920թ. Գոգոլի «Ռևիզորը» թարգմանվել է 5, «Ամուսնությունը» 3, «Տարաս Բուլբան» 2 անգամ:

Մանուկ Աբեղյանն է, որ 1892թ. հաջողությամբ թարգմանել է «Տարաս Բուլբան»: Հայ դասականները Գոգոլի ամբողջ ստեղծագործությունը համարում էին հզոր մի սկիզբ 19-րդ դարի ռուսական արձակում: Նրանք հայտարարեցին, որ Գոգոլն իր «Շինել» գրվածքով հիմք է դրել ռեալիզմին դեռ Բալզակից առաջ:

1902թ. նշվեց Ն.Վ. Գոգոլի մահվան 50-ամյակը: Այդ առիթով ուշագրավ հոդվածներ երևացին հայկական տարբեր լրագրերում: «Մուրճ» ամսագիրը իր 2-րդ համարում զետեղեց Ստեփան Լիսիցյանի ծավալուն հոդվածը «Ն.Վ. Գոգոլ» վերտառությամբ: Նա գրեց. «Քանի ավելի ենք հեռանում 19-րդ դարի ռուսաց գրականության աղբյուրներից, այնքան ավելի է մեծանում մեր աչքում Գոգոլի գեղարվեստական գործունեության նշանակությունը... Գոգոլը կարողացել է իր ստեղծագործությունները բարձրագույն կատարելության հասցնել գրեթե բացառապես իր բնատուր ճիրքի շնորհիվ, գրեթե առանց որևէ օտարազգի ազդեցության: Գոգոլի կարծիքով, բանաստեղծությունը, լինի նա մարդու և հասարակության դրական թե բացասական կողմերն արտահայտող, նախ և առաջ պիտի հավատարիմ մնա ճշմարտությանը: Գոգոլի համար ծիծաղը նույնպիսի մի ուժ է, ինչպիսին է հիացմունքը: Նրանից առաջ ոչ ոք ռուսաց գրականության մեջ նրա պես բարձր չէր դասած ծիծաղի նշանակությունը¹»:

«Մշակը» Գոգոլի մահվան 50-ամյակը գնահատեց որպես գրական տոն: Հայոց տարբեր հանդեսներում և թերթերում գրախոսություններով հանդես եկան Արշակ Չոպանյանը, Հովհաննես Հովհաննիսյանը, Լևոն Մանվելյանը, Ալեքսանդր Ծատուրյանը և ուրիշներ:

Այսպես, 20-րդ դարի սկզբին արդեն ձևավորվեց հայ գոգոլագիտությունը,

¹ Մուրճ, Թիֆլիս, 1902, թիվ 2, էջ 179:

որը յուրովի հարգանքի ու սիրո մի տուրք է ռուս մեծ գրողի անմահ հիշատակի հանդեպ: Հայ գոգոլագիտության մեջ միանգամայն նոր ու խորքային գնահատականի մի ծփանք էր Ա.Բակունցի Ն.Գոգոլի «Տարաս Բուլբան» հոդվածը: Այն տպագրվել է որպես առաջաբան Ն.Գոգոլի «Տարաս Բուլբա» երկի հայերեն նոր հրատարակության (1934, Պետհրատ): Թարգմանիչը հենց ինքն էր՝ Ա.Բակունցը: Ռուսական և հայկական գոգոլագիտության մեջ ոչ ոք գրականագիտական գնահատման չափանիշներին հավատարիմ, խորքային ու համոզիչ վերլուծության ու արժևորման չի ենթարկել «Տարաս Բուլբան», այնպես, ինչպես Բակունցը: Այստեղ նա նախ նշեց, որ «Տարաս Բուլբան» Գոգոլի նշանավոր երկերից է: Սակայն ընդգծեց, որ «Իհարկե, Գոգոլը հանճարեղ հեղինակ է յուր «Մեռած հոգիներ» պոեմով, բայց և այնպես, այս երկի մեջ ևս, թեև պակաս չափով, շողում է նրա բարձր հանճարը, նրա վառ երևակայությունը և պատմելու մեծ վարպետությունը»¹:

Ճանոթանալով բակունցյան այս արժևորմանը՝ դժվար չէ նկատել, որ հայ տաղանդավոր գրող-քննադատը ծագում է հանրահայտ այդ երկը գնահատել ըստ պահանջվող չափանիշների՝ այն համեմատելով հենց ռուս մեծ գրողի գլուխգործոցի հետ:

Խորապես յուրացրած լինելով ուկրաինական ժողովրդի պատմական անցյալի իրադարձությունները՝ Ա.Բակունցը շեշտում է. «Տարաս Բուլբայի» մեջ հիշատակված հերոսներից շատերը ոչ միայն պատմական անձնավորություններ են, որոնց մասին Գոգոլը տեղեկություններ է քաղել հին տարեգրություններից, այլև ոմանք եղել են հեղինակի նախահայրերը, և նրանց մասին ավանդել է տոհմական քրոնիկան»²:

Բակունցը մատնանշում է Գոգոլի ստեղծագործության համար պատկերներին, ոճի և կյուբի անսպառ աղբյուրը, այն անգիր վեպերն ու զրույցները, որ նա լսել է բանդուրիստներից և շնորհալի պատմող կոզակներից: Երկի հաջողության գրավականը Բակունցը տեսնում է գրողի կերպարաստեղծման կարողության մեջ: «Տարաս Բուլբայի» առիթով Բակունցն անդրադառնում է հզոր գրողի «Մեռած հոգիներին» ու յուրովի գնահատում նրա անկրկնելի տաղանդը: «Ռուս գրողներից,- գրում է նա,- ոչ ոք այդքան վառ գույներով չի նկարել այդպիսի պորտրետներ... Գոգոլը բարձր էր յուր շրջապատից... Նա իրեն համարում էր մի մարգարե, որ առաքելություն ունի, մի խարազան, որի հարվածներով մարդկանց պիտի սթափեցնի»³:

Անդրադառնալով «Տարաս Բուլբային»՝ Ա. Բակունցը համարձակորեն քննարկում է այդ երկի ժանրային առանձնահատկությունները և կատարում համոզիչ ընդհանրացում. «Միայն և իզուր կլիներ «Տարաս Բուլբան» համարել պատմական վեպ: Ուշադիր ընթերցողը կնկատի այն սպիտակ թելերը, որոնցով մի կերպ իրար են միացված երկի զանազան մասերը: Կան հատվածներ, որոնք առանձին ամբողջություն են, և թվում է, թե արհեստական կերպով են հագցված կյուբին: Չափազանց պրիմիտիվ է նաև երկի կառուցվածքը, չկան բարդ հանգույցներ, որոնք առհասարակ հատուկ չեն Գոգոլի ստեղծագործությանը»⁴:

1 **Բակունց Ա.** Երկեր 4 հատորով, Ե., հ.4, 1984, էջ 111:

2 Նույն տեղը, էջ 111:

3 Նույն տեղը, էջ 114-115:

4 Նույն տեղը, էջ 115:

Դժվար չէ նկատել Ա. Բակունցի ոչ միայն բարձր գեղագիտական ճաշակը, այլև գեղարվեստական երկի, կոնկրետ պատմավեպի կառուցվածքի վերաբերյալ նրա գրականագիտական խոր իմացությունը:

Սակայն Բակունցը չի շրջանցում «Տարաս Բուլբայի» առինքնող այն երանգները, որոնց շնորհիվ արժանացել է ընթերցողների լուրջ հետաքրքրությանը: Նա նշում է. ««Տարաս Բուլբան» ճիշտ կիսականանք, եթե այդ երկն ընդունենք իբրև նմանություն ժողովրդական ավանդավեպի, իբրև մի գրույց, որ փանդի-ռի նվագակցությամբ պատմում էին ուկրաինական գյուղերում: Այդ միայն մի երգ է, մի պարզ պատմություն: Գոգոլը վերցրել է ոչ միայն ավանդավեպի նյութը, այլև ձևը: Նա պատմում է էպիկական հանդարտությամբ»¹:

Ա.Բակունցը միաժամանակ ընդգծում է, որ Գոգոլը ժողովրդական ստեղծագործության ձևերը մշակել է, հարստացրել: Նա բնության նկարագիրը ադամանդի մանր ու խոշոր քարերի նման ցրել է երկի զանազան մասերում՝ ստեղծելով նաև ռազմի շոշափելի տեսարաններ:

Բակունցի խոհերի ու գրականագիտական ընկալումների սահմաններն ընդարձակ են: Հետաքրքիրն այն է, որ նա Գոգոլի «Տարաս Բուլբայի» և 5-րդ դարի պատմիչ Եղիշեի «Վարդանի և հայոց պատերազմի մասին» երկերի մեջ նմանության եզրեր է տեսնում: Սա մի կարծիք է, որ արժանի է գրական լուրջ քննարկման:

Եզրափակելով իր նշանակալից խոսքը Գոգոլի «Տարաս Բուլբա» երկի վերաբերյալ՝ Բակունցը ոգեշնչումով ընդգծում է. «Ռուս գրողներից և ո՛չ մեկը չի ունեցել այդպիսի հզոր երևակայություն, և ո՛չ մեկը չի թողել այնպիսի էջեր, որտեղ լինեի այնքան արև, այդպիսի սանձարձակ տարերք և այդ տարերքի նման դյուցազուններ»²:

ԽՍՀՄ կազմավորման և նրա բարդ ու հակասական ընթացքի մեջ խոշոր երևույթ էր Խորհրդային գրողների համամիութենական առաջին համագումարը, որտեղ, որպես հարակից զեկուցող, արձակի վերաբերյալ հանդես է եկել Ա. Բակունցը: Ի դեպ՝ չափածոյի մասին իր ճառով հանդես է եկել Եղիշե Չարենցը:

Նախահամագումարյան օրերին «Լիտերատուրնայա գազետան» տպագրել է ԽՍՀՄ ազգային անվանի մի շարք գրողների ելույթներ: Թերթի 1934թ. օգոստոսի 17-ի 104-րդ համարում զետեղվել է Ա.Բակունցի հոդվածը՝ «Չրույց Ա.Բակունցի հետ (Հայաստան)» խորագրով:

Այստեղ ևս, կարող ենք ընդգծել, որ այդ օրերի նմանատիպ ելույթներում ոչ ոք այնպիսի համարձակությամբ և գրական հայացքների խորությամբ չի բարձրացրել կարևոր նշանակություն ունեցող այնպիսի հիմնախնդիրներ, ինչպիսին Ա.Բակունցը: Դա բխում էր համաշխարհային գրականության խոր իմացությունից: Չմոռանանք, որ մեծանուն գրողը 1920-23թթ. բարձրագույն կրթություն է ստացել Խարկովի գյուղատնտեսական ինստիտուտում: Չի բացառվում նրա նորովի շփումները ռուս դասական գրականության հետ:

«Լիտերատուրնայա գազետայում» տպագրված «Հանուն ժանրերի բազմազանության» գրույցի հենց սկզբից Բակունցը մատնացույց է անում ինչպես ազգային, այնպես էլ ռուս գրականությանը բնորոշ ամենաեական թերություններից մեկը՝ բավարար չափով մտածված վերաբերմունքի բացակայություն:

¹ Բակունց Ա. Երկեր 4 հատորով, Եր., հ.4, 1984, էջ 116:

² Նույն տեղը, էջ 118:

նը հին ժանրերի օգտագործման և նոր ժանրերի ձևավորման նկատմամբ: Եվ անմիջապես գրականության տեսության բակունցյան ծալ-ծալ իմացությամբ նշում է. «Եվ ահա գրողները, փոխանակ, իրենց երկերի ձևը կառուցեն բուն նյութի էությունից ելնելով, այդ նյութը խորթում են հանձնարարված ժանրի շրջանակի մեջ: Տվյալ ժանրը դառնում է տիրապետող, դրանով գրվում են մեծ թվով երկեր, սակայն, ավաղ, բնավ ոչ բարձրորակ: Դրա հետևանքով տուժում է ինչպես տվյալ ժանրը, այնպես էլ մեր ամբողջ գրականությունը, որը պետք է որ լինի անսահմանորեն բազմազան ու բազմահևար»¹:

Կարևոր ենք համարում նշել նաև այն հանգամանքը, որ Ա.Բակունցն այստեղ բարձրացնում է նաև սոցռեալիզմի՝ «ձևով ազգային և էությամբ սոցիալիստական» բանաձևի երերուն կողմը՝ ընդգծելով. «Ցանկացած ազգային գրականությունը պետք է իր ավանդը մուծի սոցիալիստական գրականության ձևերի ընդհանուր գանձարանը: Մինչդեռ, գրեթե ոչ ոք մեզանից չի օգտագործել, օրինակ, արևելյան հեքիաթի ժանրը: Իսկ այդ ժանրը կարող է արդյունավետ օգտագործվել ինչպես ցույց է տալիս, թեկուզ, Դեմիրճյանի «Քաջ Լազար» պիեսի հաջողությունը»²:

Ա.Բակունցը չի շրջանցում նաև այն վնասաբեր երևույթը, որ կապված էր ՌԱՊԴ-ի տխուր ժառանգության հետ: Նա ցավով ընդգծում է, որ չի վերացվել մասնավորապես նաև այնպիսի մի փաստ, որ ՌԱՊԴ-ը գրողին գնահատում էր ոչ այնքան նրա ստեղծագործական ակտիվությամբ, որքան գրական կազմակերպությունների մեջ գրողի մասնակցության աստիճանով: Ահա, հենց այդ պատճառով է, որ «մինչև այժմ Մոսկվայում հայտնի են ազգային այնպիսի գրողների մի շարք անուններ, որոնք իսկական ստեղծագործական կշիռ չունեն, այն ժամանակ, երբ մեր գրականությունը իսկապես առաջ շարժող գրողները քիչ չեն հայտնի: Հիշենք Չարենցին: Ոչ միայն Հայաստանի, այլև ամբողջ Միության մասշտաբով այդ խոշորագույն բանաստեղծը գրեթե անծանոթ է ռուս ընթերցողների լայն շրջանին, իսկ եթե հայտնի էլ է, ապա առավելապես իբրև արձակագիր: Դա ավելի քան անարդարացի է»³:

Այսպիսի ազնիվ, արդարացի, համարձակ ու տեղին խոսք այդ ժամանակաշրջանում կարող էր ասել միայն սյունեցի Ակսել Բակունցը:

Ա.Բակունցն ասես ափի մեջ տեսնում էր ԽՍՀՄ ժողովուրդների գրականության հունձքը՝ հաջողություններով ու թերություններով հանդերձ: Նա իր տաղանդի գերաստղային շողարձակումով նկատում էր, որ ինչպես հայ, այնպես էլ վրաց գրականության հիմնական թերությունը որոշ գավառականությունն է, որի պատճառով «գրողն իր նյութը չի բարձրացնում գաղափարական նշանակալից բարձրության, շատ հաճախ մնալով տեղական պայմանների յուրահատկության գերության մեջ: Դա, ի դեպ, հատուկ է նաև առանձին ռուս գրողների»⁴:

Ելնելով տվյալ ժամանակաշրջանի քաղաքական և մշակութային ոչ բարենպաստ մթնոլորտի պատճառով աղտոտված ու չարնախանձ գործիչների կոր-

1 **Բակունց Ա.**, Երկեր 4 հատորով, Եր., հ.4, 1984, էջ 121:

2 Նույն տեղը, էջ 121:

3 Նույն տեղը, էջ 121:

4 **Բակունց Ա.**, Երկեր 4 հատորով, Եր., հ.4, 1984, էջ 122:

ծանարար վարք ու բարքից՝ Ա.Բակունցը բարձրացնում է նաև խորհրդային գրողի բարոյական դիմագծի հարցը. «խորհրդային գրողի բարոյական կերպարը դեռևս համապատասխան չէ նրա պատմական վիթխարի դերին: Դրա օրինակները կարելի է գտնել ամեն մի ազգային գրականության մեջ»¹:

Ա.Բակունցը չի մոռացել նաև Հայոց սփյուռքի հայրենաբաղձ սրտերի կանչն ու ակնկալիքները: Նա ընդգծում է, որ համագումարից առաջ Երևանում ստացել են բազմաթիվ նամակներ սփյուռքում ապրող աշխատավոր հայերից, որոնք ուշադրությամբ ու սիրով էին սպասում համագումարին: Մեծ գրողը վերջում իր համոզմունքն է հայտնում, որ համագումարը կիրագործի իր հետ կապված բոլոր հույսերը և կարևոր փուլ կդառնա նոր մշակույթի աճման գործում:

Տաղանդաշատ գրողի ու խորագետ գրականագետի խոսք էր Ա.Բակունցի ճառը խորհրդային գրողների համամիութենական առաջին համագումարում: Իր բազմաբովանդակ ճառն սկսելով տվյալ ժամանակաշրջանին հատուկ բուշևիկյան ոգևորությամբ՝ այնուամենայնիվ անվանի գրողն ամենայն զգուշությամբ ու համարձակությամբ ներկայացնում է այնպիսի հիմնախնդիրներ, որոնք վերաբերում էին տվյալ ժամանակաշրջանի գրամշակութային գործընթացին, ու չեն կորցրել իրենց գործառական նշանակությունը նաև մեր օրերում: Նա ընդգծում է Գորկու հետևյալ միտքը. «Արվեստի արժեքը չափվում է ոչ թե քանակով, այլ որակով: Եթե մեզանում անցյալում կար Պուշկինի նման հսկա, ապա դրանից չի հետևում, որ հայերը, վրացիները, թաթարները, ուկրաինացիները և մյուս ժողովուրդները ընդունակ չեն տալու գրականության, երաժշտության, գեղանկարչության, ճարտարապետության մեծ վարպետներ»²:

Հենվելով այս ճշմարիտ ու վեհ կարծիքին՝ Ա.Բակունցը միաժամանակ նշում է քաղաքական, տնտեսական, ազգային այն խտրականությունը, որ վարում էր ցարական իշխանությունը կայսրության ծայրամասերում: Ու կոնկրետ բերում է հայ գրականության հիմնադիր Խ.Աբովյանի ողբերգական ճակատագիրը. «Ուսումնասիրելով մեր գրականության այդ նշանավոր մարդու ժառանգությունը, հետևելով նրա աճմանը, - իսկ նա անհետացավ բոլորովին երիտասարդ, - կարելի է լիակատար իրավունքով ասել, որ հայ ժողովրդի զարգացման բնականոն պայմաններում Աբովյանը կդառնար ավելի մեծ»³:

Նա բերում է նաև հայ գրականության խոշորագույն դեմքերից մեկի՝ Մ. Նալբանդյանի՝ Բակունիսի, Օգարյովի և ռուսական պատմության ուրիշ առաջավոր մարդկանց մերձավոր բարեկամի օրինակը, որը բանտարկվեց Պետրոպավլովսկի ամրոցում և քսոսրի ճանապարհին զոհվեց:

Նշելով այս փաստերը՝ Ա.Բակունցը հույս է հայտնում, որ նոր օրերի ընձեռած հնարավորությունները կօգնեն՝ մեծ գրականություն ստեղծելու համար:

Ա.Բակունցն իր ճառում նշում է համամարդկային նշանակություն ունեցող մի հարց: Նա պարզապես հուշում է, որ ԽՍՀՄ կազմի մեջ մտնող ազգային ականավոր գրողները, պատկանում են բոլոր ժողովուրդներին:

«Ես՝ հայ գրողս, - շեշտում է նա, - նրանց համարում եմ ինձ հարազատ այնպես, ինչպես Թումանյանին: Ես Ռուսթավելուն համարում եմ ինձ համար այն-

1 Նույն տեղը, էջ 122:

2 Նույն տեղը, էջ 130:

3 **Բակունց Ա.**, Երկեր 4 հատորով, Եր., հ.4, 1984, էջ 131:

պիսի հարազատ գրող, ինչպես Խորենացուն, - նրա ստեղծագործությունը արդեն մտել է մեր ընդհանուր գանձարանը»¹:

Բակունցը պահանջում է, որ ԽՍՀՄ գրական բոլոր ջոկատները ձգտեն իրենց սեփականությունը դարձնել անվանի գրողների նշանակալից երկերը: Անցյալի գրական ժառանգության օգտագործումը, ըստ Բակունցի, անչափ կարևոր է. դա հնարավորություն կտա մեծ և լայն ուղիներ գծել խորհրդային գրականության համար:

Անվանի գրողը մատնանշում է նաև այն աղբյուրը, որից ազգային գրողները կարող են քաղել կոնկրետ նյութ: Դա մեկը մյուսից սովորելու պատմական օրինակն է:

Իր ճառում անվանի գրողը համառոտ ու տեղին կրկին անդրադառնում է գրականության զարգացման համար կարևոր հիմնախնդիրներից մեկին՝ ժանրերի հարցին: Նա խորհուրդ է տալիս վերադառնալ դեպի ժողովրդական ստեղծագործության իսկական և նոր արմատները:

Ճառի վերջում Բակունցն իր դիտողությունն է անում լեզվի մասին՝ թարգմանությունների կապակցությամբ. «Եթե ազգային լեզուները այժմ զարգանում են ռուսաց լեզվի ազդեցությամբ, որը ես համարում եմ միանգամայն բնականոն, ապա ռուսերեն թարգմանելու ժամանակ՝ վերջինիս տարողունակությունն ընդլայնելու համար, անհրաժեշտ է նրա մեջ մուծել ազգային լեզուների բոլոր նվաճումները: Ռուսաց լեզուն նույնպես փոփոխվում է՝ հարստանալով նոր դարձվածներով ու բառերով»²:

Հպարտությամբ յուրացնելով Ա.Բակունցի գրական հայացքները, հնարավոր չէ ատելությամբ ու ցասումով չբարձրաձայնել. «Այդ ինչո՞ւ և ինչպե՞ս մեր որոշ հայ գործիչներ, օգտվելով քաղաքական-ժողովրդակրծան մթնոլորտից, կուրացան և աչոք և մտոք, հոշոտեցին Մեծն Չարենցին ու նրա Մեծն գրչեղբայր Բակունցին... Հանուն ինչի՞...»: Չպատասխանենք «Հանուն ինչի՞» հարցին: Բայց հաստատենք, որ այդ չարամիտները մնացել են Հայոց գրական այն բարձունքների ստվերում, որոնց գագաթներին անմարում գերաստղերի պես փայլում են Կարսեցի Եղիշե Չարենցը և Սյունեցի Ակսել Բակունցը՝ աշխարհասփյուռ հայության հանճարեղ որդիները...

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աղաբաբյան Ս., Հայ սովետական գրականության պատմություն, Ե., հ. 1, 1986:
2. Բակունց Ա. Երկեր 4 հատորով, Եր., հ. 4, 1984:
3. Գասպարյան Դ., Փակ դռների գաղտնիքը. Չարենցը, Բակունցը և մյուսները, Ե., 1994:
4. Գոգոլ Ն., Տարաս Բուլբա (հայերեն թարգմ. Ա.Բակունցի), Եր., 1934:
5. «Մշակ», Թիֆլիս, 1902, թիվ 2:
6. «Մուրճ», Թիֆլիս, 1902, թիվ 2:

1 Նույն տեղը, էջ 131:

2 **Բակունց Ա.**, Երկեր 4 հատորով, Եր., հ.4, 1984, էջ 134:

ЛИТЕРАТУРНЫЕ ВЗГЛЯДЫ АКСЕЛА БАКУНЦА - КАРЕН ХАНЯН - Статья посвящена проблеме анализа и оценки некоторых литературных взглядов прозаика Акселя Бакунца на основе его статей «Тарас Бульба» Н.Гоголя и «Во имя разнообразия жанров», а также его выступления на первом съезде Союза писателей СССР. Подчеркивается, что талантливый писатель является новатором не только в художественной прозе, но и в сфере литературоведения.

Ключевые слова: А.Бакунц, Сюник, проза, литературные взгляды, Н.Гоголь, «Тарас Бульба», перевод, литературные жанры, бакунцевские обобщения.

THE LITERARY VIEWS OF AKSEL BAKUNTS - KAREN KHANYAN - In the given article an attempt is made to discuss and assess a group of literary perspectives of Axel Bakunts in a novel manner. The analysis is based on his articles «Taras Bulba by N.Gogol», «For the sake of genre diversity» and the speech that Bakunts delivered at the The First Soviet Writers Congress. The article puts an emphasis on the fact that Bakunts was an innovator not only in literary prose, but also in the sphere of literary studies.

Key words: A.Bakunts, Syuniq, prose, literary views, N.Gogol, «Taras Bulba», translation, literary genres, generalizations by Bakunts.